13-ՐԴ ՆԻՍՏ

1 սեպտեմբերի 1918թ.

Վերջերս հասարակությունը մեծ հետաքրքրություն է ցույց տալիս դեպի խորհրդի նիստերը:

Թեև նիստի սկիզբը հայտարարված էր ժամը 7-ին, բայց 6½-ին հասարակությանը հատկացված տեղերը արդեն լիքն էին:

Նիստի բացման րոպեին դահլիճն ու պատշգամբը լիքն էին ծայրե ի ծայր: Երեկոյան ժամը 7-ից մի քանի րոպե անց նախագահը բացում է նիստը՝ հայտարարելով օրակարգը: Հերթի էին դրված հետևյալ հարցերը. 1) Պարենավորման խնդրի շարունակությունը, 2) Գաղթականական հարց և 3) Դպրոցական հարց:

Նախագահը հայտնում է, որ կառավարության ներկայացուցչի բացակայության պատճառով պարենավորման հարցը կհետաձգվի մինչև նրա գալը: Ժողովը անցնում է գաղթականական հարցին: Կոմիսիայի կողմից զեկուցում է պատգամավոր *Ռ. Տեր-Մինասյանը.* Նա հայտնում է, որ այս հարցում կոմիսիան ևս աշխատանքները դեռ չի վերջացրել: Նա առայժմ զբաղվել է միայն նրանց տեղավորման և աշխատանքի կազմակերպման հարցերով: Հայաստանի տերիտորիան բաղկացած է չորս գավառամասերից, որտեղ կան 522 գյուղ՝ 524 հազար բնակչությամբ: Այդ գյուղերի մի մասը՝ 182 հազար բնակչությամբ, գաղթել են. նրանց գյուղերը մնացել են դատարկ: Սա մի երևույթ է, որը զգալի կերպով թեթևացնում է գաղթականների տեղավորման գործը: Հայաստանի Հանրապետության սահմաններում գտնված գաղթականության թիվը 300 հազարից ավելի է: Սրանից հետո մնացել է ավելի քան 200 հազար. մնացածների մի մասը հեռացել է մեր երկրից, մյուս մասը՝ մեռել: Կոմիսիան գտնում է, որ հարկավոր է նախ մտածել այդ գաղթականների մասին, որոնք ընդմիշտ պետք է բնակություն հաստատեն Հայաստանի այժմյան սահմաններում, ապա՝ մյուսների, այսինքն՝ նրանց, որոնք գաղթեցին Բաթումի դաշնագրից հետո: Այն հարցին, թե Հայաստանի կառավարությունը պետք է զբաղվի ամբողջ հայ գաղթականության, թե՝ միայն Հայաստանի սահմաններում գտնված գաղթականների գործով, կոմիսիան վերջնականապես ոչինչ չի ասում. սակայն նա տալիս է այդ հարցի նկատմամբ ունեցած իր երկու՝ միմյանց հակասող կարծիքները: Պետական բյուջեն և Հայաստանի առանց այն էլ քայքայված տնտեսությունը թույլ չեն տալիս այդքան մեծ հիմունքների վրա դնել նպաստի գործը: Մյուս կարծիքն այն է, որ ինչ էլ որ լինի, միջոցների պետք է դիմել՝ ամբողջ գաղթականությանը շուտափույթ օգնություն հասցնելու համար: Երկրորդ՝ ոչ պակաս արժեք ունեցող հարցը, նպաստի բաժանման հարցն է: Նպաստի հին սիստեմի մասին այսօր խոսք չի կարող լինել, որովհետև գաղթականների թիվը և նրանց ստանալիք գումարները այնքան խոշոր են, որ կառավարության ուժերից վեր կլինի նրանց կանոնավոր նպաստ տալու գործը: Չպետք է խոսել այդ սիստեմի մասին նաև այն պատճառով, որ նպաստը անբարոյականացնում և ձրիակերության է սովորեցնում մարդկանց, հարկավոր է կազմակերպել աշխատանք և այդ սկզբունքով առաջնորդվել նպաստի բաշխման գործում: Աշխատունակության տեսակետից գաղթականներին կարելի է բաժանել 3 կատեգորիայի՝որբեր, կանայք և տղամարդիկ: Որբերի թիվը հասնում է 7-8 հազարի. պետական միջոցներով պահել նրանց հնարավոր չէ: Պետք է որբերի կալոնիաներ ստեղծել: Եթե հնարավոր է՝ կառավարությունը պետք է որոշ հողամասեր հատկացնե որբերին՝ իրականացնելով այդպիսով կալոնիաների գեղեցիկ իդեան: Այն աշխատանքները, որոնք կկատարեն այնտեղ որբերը, զգալի չափով կթեթևացնի նրանց կերակրման գործը: Կանանց մասին կոմիսիան գտնում է, որ նրանց աշխատանքներն էլ կապված չեն դժվարությունների հետ: Հայաստանում իբրև հում նյութ կա մինչև 100 հազար փութ բամբակ, որը կարելի է օգտագործել կանանց աշխատանք մատակարարելով և միևնույն ժամանակ՝ մանուֆակտուրայի գործը կազմակերպելով:

Տղամարդկանց աշխատանքը կապված է մեծ ծախքերի հետ, նրանց արհեստը, կարելի է ասել, որ միայն հողագործությունն է: Հարկավոր է այնպիսի աշխատանքներ ստեղծել, որոնցից պետությունն էլ կարողանա օգտվել: Այստեղ ի նկատի ունեն Սևանա լճի մակերևույթը 1 մետրով բարձրացնել, էջմիածնի առուն խորացնել և այլ նման հանրօգուտ աշխատանքներ: Բժշկա-սանիտարական գործի մասին կոմիսիան դեռ ոչինչ չի արել:

Զեկուցումից հետո նախագահը հայտարարում է ընդմիջում 15 րոպեով:

Ընդմիջումից հետո խոսք է վերցնում պատգամավոր *Ազատյանը՝* ասելով. որ այս զեկուցման քննությունը միայն այն ժամանակ իմաստ կունենա, երբ կառավարության ներկայացուցիչները այստեղ լինեին, որպեսզի նրանք մեզ պարզեին, թե ի՞նչ է արված այդ խնդրի վերաբերմամբ մինչև հիմա: Այսպիսի հանգամանքներում, ասում է պատգ. *Ազատյանը,* անհնարին է խաղաղ գործունեությամբ

պարապել, քանի կառավարությունը վերևից է նայում այս խորհրդի վրա և չի հաճախում այն նիստերը, որոնք ունեն մեծ կարևորություն երկրի համար:

Պատգամավոր *Սարգսյանը,* փաստացի ուղղում է մտցնում՝ հայտնելով, որ կառավարության անդամները Խալիլ փաշայի հետ կարևոր խորհրդակցություն ունեն, ուստի և զուրկ են հնարավորությունից՝ այս նիստին ներկա գտնվելու:

Պատգամավոր *Խաչատրյանը* բողոքում է Ազատյանի տոնի դեմ, գտնելով, որ այդ տոնով չէ, որ պետք է խոսվի պառլամենտական ամբիոնից. նա գտնում է, որ նման ճառերը էժանագին ծափահարություններ վաստակելու միտումով են արտասանում, մի բան, որ վայել չէ ժողովրդի ներկայացուցչին:

Պատգամավոր *Ազատյանը* նորից խոսք խնդրելով հայտնում է, որ իր տոնը հետևանք է կառավարության՝ դեպի խորհուրդը ունեցած վերաբերմունքի, որ ներքին գործերի նախարարը մինչև այժմ դեռ հաշիվ չէ ներկայացրել այն երեք միլիոնի մասին, որ ժողովրդական կասայից է տրված նրան (ծափահարություններ դահլիճում): Պատգամավոր *Խաչատրյանը* հիշեցնում է պ. Ազատյանին, որ նրա կուսակիցներին Սեյմում, առանց նախահաշիվ ներկայացնելու, ավանս բաց թողնվեց և այն էլ ոչ թե 3, այլ՝ 100 միլիոն: Ինչու՞ պ. Ազատյանը այդպիսի տոնով չէր բողոքում իր ընկերների դեմ: Մի՞թե այն 100 միլիոնը ժողովրդական դրամ չէր (ծափահարություններ):

Պատգամավոր *Մուշեղյանը* էսէռների ֆրակցիայի կողմից անտակտ է անվանում այդպիսի հարձակումները իրար վրա: Նրա կարծիքով մեղավորը դաշնակցության ֆրակցիան է, որը ամեն քայլափոխում պաշտպանում է կառավարությանը. նա մեղադրում է Ազատյանին, որ նա իր խոսքի մեջ միշտ էլ կիրք է մտցնում: Նա հայտնում է, որ իրենց կուսակցությունը կանգնած է գործնական օպոզիցիայի հողի վրա և եկել է վերականգնելու հին Ռուսաստանը (ծափահարություններ):

Պատգամավոր *Մխիթարյանը* տեղից էսէռներին անվանում է դավաճաններ: Պատգ. *Մուշեղյանը* նույնը վերադարձնում է ժողովրդական կուսակցությանը՝ հայտնելով, որ իրենց ֆրակցիան դեմ է Հայաստանի անկախությանը:

Պատգ. *Ղազարյանը* բողոքում է Ազատյանի տոնի դեմ՝ դարձնելով նրա ուշադրությունը ներքին գործոց մինիստրի հայտարարության վրա, որ գաղթականական և պարենավորման գործերի վարիչներին՝ Մարգարյանին և Թամամշյանին, նա սպասում է Թիֆլիսից, որ նրա կարծիքով այդ մարդիկ միայն կարող են գործը կանոնավոր հիմունքների վրա դնել: Ապա նա գտնում է, որ Հայաստանի Խորհրդի բոլոր ներկայացուցիչները պետք է ունենան միայն մեկ օրիենտացիա. դա հայկական օրիենտացիան է:

Վերադառնալով գաղթականական հարցին քվեարկության է դրվում սոցիալ-դեմոկրատների բանաձևը, որը անցնում է 31 ձայնով:

Բանաձևը առաջարկում է շուտափույթ օգնություն հասցնել որբերին և կազմակերպել աշխատանքի գործը:

Նախքան անցնելը օրակարգի հերթական հարցերին, պատգամավոր Ազատյանը խնդրում է լսել սոցիալ-դեմոկրատների հարցապնդումը և ընդունել նրա շտապողականությունը: Խորհուրդը ընդունում է առաջարկը:

Ավագ քարտուղար *Զաքարյանը* կարդում է հարցապնդումը և ապա պարզում մի քանի կետեր: Նա հայտնում է, որ Վաղարշապատի գավառում անարխիան գլուխ է բարձրացրել, որ գյուղացիների գույքը մատնված է ոչնչացման զինվորականների կողմից, որ գյուղերի զինվորական կոմիսարները ի չարն են գործ դնում իրենց իրավունքները և այդպիսով քայքայում նրանց տնտեսությունը: Հայտնի՞ է արդյոք կառավարությանը այդ անարխիայի մասին, հայտնի՞ է արդյոք և այն հանգամանքը, որ ինտենդանտսվոն ավելի հաց է ստանում, քան զորքի քանակն է, և ուր է գնում այդ ավելորդ հացը:

Պատգամավոր *Գ. Տեր-Հակոբյանը* հրավիրում է խորհրդի ուշադրությունը հարցի մեկ այլ կողմի վրա. նա միանում է սոցիալ-դեմոկրատների այդ հարցապնդմանը, գտնում է, որ փաստերը մեկը մյուսից պերճախոս են, բայց ու՞մ պետք է

մեղադրել, ասում է հռետորը, այս անարխիայի մեջ, զինվորների՞ն, թե՝ նրանց ղեկավարներին:

Ազատյանը տեղից. մենք զինվորներին չենք մեղադրում:

Պատգամավոր *Տիգրանյանը* այդ բացականչության առթիվ հարց է տալիս պատգ. Ազատյանին. զինվորներին՝ իրենց այդ արարքների համար, նա գտնու՞մ է հանցավոր, թե՞ ոչ:

Պատգ. *Ազատյանը* պնդում է, որ դաշնակցությունը իր այդ հարցով նրա ասածները ուզում է պրովոկացիայի նյութ դարձնել: Նա գիտե, որ այդ տգեղ երևույթը ունի իր պատճառները և որ հանցավորը ներկա դեպքում հրամանատարներն ու ինտենդանտությունն է: Այնուհանդերձ նա չի փորձում արդարացնել ոչ ոքի, ով էլ լինի նա:

Ապա խոսում են մի շարք պատգամավորներ, որոնցից *Սահակ Թորոսյանը* գտնում է, որ վայել չէ Հայաստանի Խորհրդի անդամներին հայոց զորքի և նրա ղեկավարների մասին արտահայտվել այնպիսի տոնով, որ իբր նրանք ավազակներ և գողեր են, ինչպես այդ արեց պատգամավոր Ազատյանը:

Հայ զորքն ունի փառավոր էջեր իր պատմության մեջ. հենց ինքը՝ Հայաստանի Հանրապետությունը, արդյունք է մեր զորքերի հերոսության:

Պատգ. *Խաչատրյանը* խնդրում է արձանագրության մեջ մտցնել, որ սոցիալ-դեմոկրատների ֆրակցիան առաջինը եղավ, որ խորհրդում երեք անգամ ֆրակցիաներից մեկի հասցեին «պրովոկացիա» բառը գործադրեց:

Խոսք է խնդրում պատգ. *Արշ. Մելիքյանը* և հայտնում, որ նա հարմար առիթի էր սպասում ասելու այն ամենը, ինչ որ հիմա պետք է ասի: Նա գտնում է, որ դավաճանած կլիներ իր խղճի դեմ, եթե լռությամբ անցներ այն ամենի վրայից, ինչոր կատարում է խորհրդում իրենց ֆրակցիայի անդամ Ազատյանը. նա գտնում է, որ կեղտող երևույթը պետք է որակվի կեղտոտ անունով, այլ ոչ թե փիլիսոփայորեն արդարացվի. այսպիսի ձևով կարելի է ամեն ինչ արդարացնել: Եթե նա չի մեղադրում անարխիա առաջացնող զինվորությանը, ապա ինչու՞ նրա պես մտածող վրաց մենշևիկները զանազան ածականներով վարկաբեկում էին ռուս հեղափոխական բանակը: Պատգ. Ազատյանը քննադատում է ամեն ինչ Հայկական Հանրապետության մեջ: Նա քաջություն է համարում հարձակվել մի կառավարության վրա, որի ձեռքերը և ոտքերը կաշկանդված են. նա չի ուզում հասկանալ, որ իր պես մտածողներն էին, որ այս օրհասական դրության մեջ ձգեցին մեր Հայրենիքը: Ու՞ր էին այն ժամանակ Ազատյանները և ինչու չէին համարձակվում քննադատել մենշևիկների կառավարությանը: Գուցե նրանց բերանը փակում էր այն նպաստը, որ նոքա ստանում էին վրաց սոցիալ-դեմոկրատների՞ց (բուռն և երկարատև ծափահարություններ):

Հայ ժողովրդական կուսակցությունը միանում է հարցապնդմանը, որը և անցնում է 28 ձայնով:

Ցանկություն է հայտնվում, որ կառավարությունը տա իր պատասխանը երեքշաբթի օրվա նիստին:

Խորհուրդը անցնում է դպրոցական հարցին: Զեկուցում է պատգ. *Տիգրանյանը:*

Հանձնաժողովի կողմից նա ներկայացնում է մի ընդհանուր բնույթ կրող օրինագիծ՝ մանրամասնությունները թողնելով այն գլխավոր կոմիտեին, որը կոմիսիայի կարծիքով պետք է ընտրվի խորհրդի անդամներից: Դա կլինի այն գերագույն մարմինը, որը ժամանակավորապես կվարի բոլոր դպրոցական գործերը: Կոմիսիայի կարծիքով պետք է խուսափել առայժմ դպրոցներում արմատական բեկում մտցնելուց: Բոլոր կարգի դպրոցներում պետք է այս տարի պարապմունքները սկսել և պետական նպաստ տալ այն դպրոցներին, որոնց տնտեսությունը քայքայված է, սակայն այդ հանգամանքը չպետք է հիմք ծառայե դպրոցների պետականացման, դպրոցը պետք է լինի համայնական, և ամեն ոք հանրապետության մեջ իրավունք պետք է ունենա դպրոց բանալու և պահելու իր սեփական ծախքերով: Դպրոցական վարչությունը պետք է կազմակերպվի կուսակցությունից դուրս: Քաղաքական կյանքը չպետք է անդրադառնա դպրոցական կյանքի վրա:

Ժամանակի ուշ լինելու պատճառով ընդունվում է հարցի շտապողականությունը և քննությունը հետաձգվում է մյուս նիստին:

Նիստը փակվում է գիշերվա ժամը 11 անց 40 րոպեին:

Հետևյալ նիստը նշանակվում է երեքշաբթի, սեպտեմբերի 3-ին:

«Կառավարության լրաբեր», 6 սեպտեմբերի 1918թ.